ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF LABOUR AND SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

Մասիսի տեղական գանձ.բաժանմունք
հ/հ 900438000318

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ</u>*

19.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Լենտեքս» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար *հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/5-ԵԽ-6-Խ* ծածկագրով պայմանագիրը
միակողմ և մասնակի լուծելու մասին.

*<u>Պ Ա Ր Զ Ե Ց Ի</u>*

19.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Լենտեքս» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար *հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/5-ԵԽ-6-Խ* ծածկագրով ծածկագրով:

Համաձայն վերը նշված պայմանագրի 1.1 կետի պահանջների՝ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին և «Լենտեքս» ՍՊԸ-ն պետք է մատակարարի պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման–ժամանակացույցով նախատեսված ապրանքները, մասնավորապես, Սվիտեր, Սպորտային հագուստ/մանկական/,մայկա երկարաթև և դպրոցահասակ երեխայի,կիսաթև մայկա տղայի /6-18/,կիսաթև մայկա աղջկա/6-18/,գիշերային զգեստ կամ պիժամա/տղայի/,գուլպա հաստ,վերմակ ձմեռային և անկողնային սպիտակեղենի հավաքածու լոգարանների համար, իսկ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պարտավորվում է ընդունել ապրանքները ու վճարել դրանց համար/տես՝ պայմանագրի առարկան՝1.1կետը/:
«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ–ի պատասխանատու անձի կողմից կազմվել են հայտեր,արձանագրություն և դրանցով սահմանվել են ժամկետներ՝ տեխնիկական բնութագրով սահմանված անկողնային սպիտակեղենի հավաքածուն մատակարարելու վերաբերյալ:

30.04.2024թվականից մինչև 18.06.2024թվականը «Վաճառողը» «Գնորդին» անկողնային սպիտակեղենի հավաքածուն մատակարարվել է պայմանագրի էական պայմանի խախտմամբ, այն է՝ չի մատակարարվել համաձայն տեխնիկական բնութագրով սահմանված քաշի,իսկ տեխնիկական բնութագրով նախատեսված մյուս ապրանքները համաձայն հայտերի դեռևս շարունակվում են պատշաճ մատակարարվել:

Նույն պայմանագրի 8..9 կետի դրույթների համաձայն Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը:Վաճառողը,պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը,սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմված և ուղարկված հայտերի,արձանագրությունների համաձայն ապրնաքը/անկողնային սպիտակեղենի հավաքածու/մատակարարվել է պայմանագրով սահմանված էական պայմանների խախտմամբ.ինչպես նաև հիմք ընդունելով Ձեր դիմումները և ղեկավարվելով պայմանագրի էական պայմաններից.

ՈՐՈՇԵՑԻ

1/2024թվականի հունիսի 20-ին միակողմ և մասնակի լուծել՝ 19.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Լենտեքս» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/5-ԵԽ-6-Խ ծածկագրով պայմանագիրը:

2/Օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել «Լենտեքս»ՍՊԸ-ին պայմանագրի լուծման վերաբերյալ :

3/Կատարել մատակարարման պայմանագրով սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

ՏՆՕՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ